Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

2023 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է նոր ծրագրերի իրագործմամբ և համայնքում ծագած մի շարք խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Համաձայն կառավարության 15.07.2021 թվականի թիվ 1169-Ն որոշման համայնքի մանկապարտեզներ հաճախող կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող թվով 15 երեխայի կրթության ապահովման համար հատկացվել է ընթացիկ դրամաշնորհ՝ 4966,5 հազար դրամ, որն անհրաժեշտ է ներառել եկամուտներում:

Հաշվի առնելով համայնքում առկա խնդիրների մեծ ծավալը, որով պայմանավորված ծառայողական ավտոմեքենաները շահագործվում են նախատեսվածից շատ, անհրաժեշտություն է առաջացել բյուջեում բնական գազի համար նախատեսված միջոցներն ավելացնել 4000,0 հազար դրամով:

Համայնքային ենթակառուցվածքներում, ինչպես նաև ամբողջ համայնքի տարբեր ոլորտներում առաջացած ընթացիկ նորոգման աշխատանքների մեծ ծավալով պայմանավորված անհրաժեշտ է ընթացիկ նորոգման համար բյուջեում առկա միջոցներն ավելացնել 15000,0 հազար դրամով:

Սեպտեմբեր ամսին Իտալիայի Հռոմ քաղաքում կայանալիք «Համաշխարհային էնդոկրինոլոգիայի կոնգրես» կոնֆերանսին մասնակցելու հրավեր է ստացել Այնթապ ԲԱ ՀՈԱԿ-ի տնօրենը, որը դիմել է համայնքին 400,0 հազար դրամի օժանդակության խնդրանքով:

Համայնքային մի շարք ծրագրերի իրականացման համար 2022թ. ձեռք բերված նախագծանախահաշվային փաթեթներով կատարվել են գնման գործընթացներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել ընդհանուր 7 729,0 հազար դրամ, որից՝

- Մասիս համայնքի Զորակ գյուղի ամբուլատորիայի վերանորոգման համար 1 534,0 հազար դրամ
- Համայնքապետարանի 3-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների հիմնանորոգման համար՝ 6 195,0 հազար դրամ:

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումներով պայմանավորված խնդիրներ են առաջանում աղբահանության վճարների գանձման հետ, ուստի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման և աղբահանության վճարների հավաքագրման գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել համապատասխան ծրագիր, որի արժեքն է 3000,0 հազար դրամ, ինչպես նաև 5 ամսվա սպասարկման վճար՝ 200,0 հազար դրամ:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
							Հազար դրամ
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Ծախսեր /հազար դրամներով/*	*Եկամուտներ /հազար դրամներով/*
				Եկամուտներ			
1				**Ընթացիկ սուբվենցիա.**նախադպրոցական կրթության սոցիալական որոշ խմբի 15 երեխաների կրթության ապահովման համար			4966,5
				Ծախսեր			
2	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Տրանսպորտային նյութեր /բնական սեղմված գազ/	**4264**	4000,0	
3				**Շենք-շինությունների կապիտալ նորոգում.**համայնքապետարանի 3-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների հիմնանորոգում	**5113**	6195,0	
4	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**Տրանսպորտային ծառայություն	**4239**	-16167,5	
5				**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	**4251**	15000,0	
6				**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Վարչական սարքավորումներ	**5122**	-9195,0	
7	**05**	**1**	**1**	**Աղբահանում.** Համակարգչային ծառայություններ	**4232**	200,0	
8				**Աղբահանում.** Ոչ նյութական ակտիվներ /աղբահանության ծրագիր/	**5132**	3000,0	

9	**07**	**6**	**1**	**Առողջապահություն.** Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում /Զորակի ԲԱ վերանորոգում/	**4251**	1534,0	
10				**Առողջապահություն.**Սուբսիդիա	**4511**	400.0	
				Ընդամենը		***4966,5***	***4966,5***

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական մասի եկամուտներն ու ծախսերը կավելանան 4966,5 հազար դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ